ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

~~15) **կամավոր՝** պրոբացիայի ծառայության առջև դրված խնդիրների լուծման նպատակով կամավոր հիմունքներով պրոբացիայի ծառայության գործառույթների իրականացմանն օժանդակող անձ:~~

Հոդված 54. Համապատասխան նախարարության լիազորությունները պրոբացիայի ծառայության կազմակերպման գործում

2. Համապատասխան նախարարը՝

~~9) հաստատում է կամավորի հետ կնքվող պայմանագրի օրինակելի ձևը և պայմանները.~~

~~**Հոդված 57. Պրոբացիայի ծառայության կամավորը**~~

~~1. Կամավորները պրոբացիայի ծառայության առջև դրված խնդիրների լուծման նպատակով անվճար հիմունքներով մասնակցում են վերջինիս գործառույթների իրականացմանը՝ որպես օժանդակողներ:~~

~~2. Կամավորները ներգրավվում են պրոբացիայի ծառայության հետ կնքված պայմանագրի հիման վրա:~~

~~3. Պրոբացիայի ծառայության հետ կնքված պայմանագրում նշվում են կամավորի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը: Պայմանագրի օրինակելի ձևը և պայմանները հաստատում է համապատասխան նախարարը:~~

~~4. Իրենց գործունեության ընթացքում կամավորները պարտավոր են պահպանել իրենց հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը և չփոխանցել այն երրորդ անձանց:~~

~~5. Կամավորներին ներկայացվող չափանիշները և նրանց ներգրավման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

Հոդված 57. Պրոբացիայի ծառայության կամավորները կամ կամավոր աշխատանք կատարող այլ անձինք

Պրոբացիայի ծառայությունն իր առջև դրված խնդիրների լուծման նպատակով օրենքով սահմանված կարգով կարող է ներգրավել կամավորների կամ կամավոր աշխատանք կատարող այլ անձանց:

~~Հոդված 58. Կամավորի իրավունքները~~

~~1. Կամավորն իրավունք ունի՝~~

~~1) ծանոթանալու իր իրավունքները և պարտականությունները սահմանող իրավական ակտերին.~~

~~2) ստանալու իր պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր.~~

~~3) անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմանների ապահովվածության.~~

~~4) պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին վերապատրաստվելու:~~

~~2. Կամավորը կարող է ունենալ սույն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված այլ իրավունքներ:~~

~~Հոդված 59. Կամավորի պարտականությունները~~

~~1. Կամավորը պարտավոր է՝~~

~~1) կատարել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.~~

~~2) կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները ճշգրիտ ու ժամանակին.~~

~~3) կատարել պրոբացիայի ծառայության մարմինների և պաշտոնատար անձանց՝ իրենց լիազորությունների շրջանակում ընդունված հրամաններն ու որոշումները, տրված կարգադրություններն ու ցուցումները.~~

~~4) պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելիս պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները.~~

~~5) ապահովել պայմանագրով իր ստանձնած պարտականությունների կատարումը:~~

~~2. Կամավորը պարտավոր է իրեն վերապահված իրավունքներն իրացնել օրենքին համապատասխան և իր գործունեության ընթացքում թույլ չտալ քաղաքացիների ու կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի որևէ խախտում:~~

~~3. Կամավորի համար օրենքով և պայմանագրով կարող են սահմանվել նաև այլ պարտականություններ:~~